«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա.
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., ավագ դասախոս Զարիկյան Կ.Բ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Վարչական իրավունք (1-ին կիսամյակ)

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

1. Ներածություն

«Վարչական իրավունք» դասընթացն ուսումնասիրում է մասնավոր իրավունքի սուբյեկտների և հանրային իշխանության մարմինների միջև առաջացող այն իրավահարաբերությունները, որոնք ծագում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների ապահովմանն և պարտականությունների կատարմանն ուղղված՝ օրենքով սահմանված վարչական լիազորությունների իրագործման շրջանակում։

Վարչական իրավունքը բաժանվում է երկու ճյուղերի՝ նյութական և վարութային։ Վարչական նյութական իրավունքը ուսումնասիրում է մասնավոր իրավունքի սուբյեկտների այն նյութական իրավունքներն ու պարտականությունները, որոնց կապակցությամբ առաջանում են վարչական իրավահարաբերություններ։ Վարչական վարութային իրավունքը ընդգրկում է ընթացակարգային այն կանոնները, որոնք կիրառվում են մասնավոր իրավունքի սուբյեկտների և հանրային իշխանության մարմինների միջև ծագող վարչական իրավահարաբերությունների շրջանակում։

«Վարչական իրավունք» դասընթացի ընդհանուր մասը ընգրկում է մասնավոր իրավունքի սուբյեկտների և հանրային իշխանության մարմինների միջև առաջացող վարչական իրավահարաբերություններին առնչվող հասկացութային ապարատը, պատմատեսական հարցերը, իսկ հատուկ մասը՝ վարչական վարութային իրավունքը։ Վարչական նյութական իրավունքը ներառված է որոշակի ոլորտներին վերաբերող հատուկ դասընթացներում (ընտրական իրավունք, հարկային իրավունք, մաքսային իրավունք և այլն)։

Վարչական իրավունքի դասավանդման այս մոտեցումը հարաբերական նոր է, քանի որ խորհրդային տարիներին վարչական իրավունքը նույնացվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ իրավունքի հետ։ Բացի վարչական իրավախախտումների նյութական և ընթացակարգային հարցերից, խորհրդային վարչական իրավունքը չի ներառել այլ թեմաներ։ Դրա արդյունքում վարչական իրավունքի դասավանդման շրջանակում ավանդաբար չեն ընդգրկվել վարչական իրավունքի հիմնական թեմաները։

«Վարչական իրավունք» դասընթացը նախատեսված է բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, ինչպես նաև վարչական իրավունքի հիմնահարցերն ինքնուրույն ուսումնասիրողների համար։ Վերջինս կարող է նաև գործնական կիրառելիություն ունենալ հանրային և դատական

ծառայողների, ինչպես նաև տվյալ ոլորտում գործունեություն ծավալող փաստաբանների և իրավաբանների համար։

«Վարչական իրավունք» դասընթացի նպատակն է ապահովել ուսանողների կողմից վարչական իրավունքի տեսության հիմնական դրույթների, վարչական օրենսդրության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունների, ինչպես նաև մասնավոր իրավունքի սուբյեկտների և վարչական մարմինների միջև ծագող վարչական իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված կառուցակարգերի վերաբերյալ համալիր գիտելիքների յուրացումն։

«Վարչական իրավունք» դասընթացի հիմնական խնդիրներ են՝

- ապահովել ուսանողների առավելագույն ներգրավածությունը կրթական գործընթացին.
- օգնել ուսանողներին հասկանալ վարչական իրավունքի համակարգը, առանձնահատկությունները և կարգավորման առարկան.
- ուսումնասիրել վարչական իրավունքի սկզբունքները և հիմնական գործառույթները.
- բացահայտել վարչական օրենսդրության հիմնական օրինաչափությունները.
- տարբերակել և կարողանալ դասակարգել վարչարարության տեսակները.

Դասընթացի օբյեկտը և առարկան։

«Վարչական իրավունք» դասընթացի ուսումնասիրության օբյեկտ հանդիսանում է վարչական օրենսդրությունը և վարչական իրավահարաբերությունը կարգավորող այլ իրավունքի աղբյուրները։

«Վարչական իրավունք» դասընթացի առարկան՝ վարչական իրավունքի սուբյեկների միջև առաջացող իրավահարաբերությունների հիմնախնդիրներն են։

Դասընթացի մուտքային պահանջները։

«Վարչական իրավունք» դասընթացի շրջանակներում, առավել արդյունավետ կրթական վերջնարդյունքների ձևավորման համար, ուսանողներին անհրաժեշտ են բազային գիտելիքներ իրավագիտությունից, պետության և իրավունքի տեսությունից, սահմանադրական իրավունքից, ինչպես նաև հարակից մի շարք այլ իրավունքի ճյուղեր ուսումնասիրող առարկաներից։

2.1. Կրթական վերջնարդյունքները։ Դասընթացի հաջող ավարտին ուսանողը պետք է.

իմանա՝

գիտելիքի կիրառման հմտությունները՝

- Որոշել վարչական ոլորտում իրավական խնդիրների էությունը.
- Կողմնորոշվել վարչական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում.
- Ներկայացնել սեփական իրավական դիրքորոշում՝ հիմնվելով նորմատիվ իրավական ակտերի, դատական պրակտիկայի և վարչական մարմինների որոշումների վրա.

կարողանա՝

ընդհանրական իմացական հմտությունները՝

- Գործնականում կիրառել ձեռք բերված գիտելիքները.
- Կատարել վիճահարույց իրավիճակների իրավական վերլուծություն:

ունակ լինի՝

ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Ինքնուրույն յուրացնել նորմատիվ իրավական ակտերը, դատական պրակտիկան և վարչական մարմինների բացատրական նյութերը.
- Վերլուծել վարչական իրավունքի աղբյուրներ հանդիսացող նորմատիվ իրավական ակտերը.
- Կատարել վարչական ոլորտում տարբեր իրավական երևույթների համեմատական վերլուծություն.
- Կարողանալ աշխատել վարչական ոլորտում շրջանառվող իրավական փաստաթղթերի հետ:

Դասավանդման եղանակները և մեթոդները:

«Վարչական իրավունք» դասընթացն անցկացվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Գործնական պարապմունքների նպատակն է օգնել ուսանողներին ուսումնասիրել դասընթացի կարևորագույն խնդիրները, խորացնել և համակարգել ուսանողների գիտելիքները տվյալ ոլորտում:

«Վարչական իրավունք» դասընթացն ուսումնասիրելիս կարևոր դեր է խաղում ուսանողների ինքնուրույն աշխատանքը:

«Վարչական իրավունք» դասընթացի ընթացքում կիրառվում են բացատրական, տեղեկատվական, գործնական, վերարտադրողական, համեմատական, հետազոտման և մասնակի որոնման մեթոդները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Դասընթացը ներառված է «Ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկում»՝ 3 ակադեմիական կրեդիտ (108 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 32 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2-րդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**64**
1.1.1.Դասախոսություններ	**32**
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**40**
1.2.1. Քննություններին նախապատրաստում	
1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	
1.2.2.1.Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	
1.2.2.2.Էսսե և ռեֆերատներ	
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք**

2.3. Առարկայի ծավալը՝ 108 ժամ, կրեդիտ՝ «3» ECTS:

2.4. Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	**Ընդամենը**	**Դասախոսու-թյուններ**	**Գործնական / սեմինար պարապմունքներ**
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Կառավարումը որպես վարչական իրավունքի առարկա	**6**	**3**	**3**
Թեմա 2. Վարչական իրավունքը հանրային	**6**	**3**	**3**

իրավունքի համակարգում			
Թեմա 3. Վարչական իրավունքի աղբյուրները	**4**	**2**	**2**
Թեմա 4. Պետական կառավարումը և տեղական ինքնակառավարումը	**8**	**4**	**4**
Թեմա 5. Վարչարարության հասկացությունը և տեսակները	**8**	**4**	**4**
Թեմա 6. Վարչարարության հիմնարար սկզբունքները	**8**	**4**	**4**
Թեմա 7. Վարչական ակտ	**8**	**4**	**4**
Թեմա 8. Վարչական ակտի վերացումը	**8**	**4**	**4**
Թեմա 9. Ռեալ ակտ	**8**	**4**	**4**
Ընդամենը	**64**	**32**	**32**

3. Դասընթացի թեմաները եւ ծավալները:

ՄՈԴՈՒԼ 1

Թեմա 1**.** Կառավարումը որպես վարչական իրավունքի առարկա

Այս թեման վերաբերում է հանրային կառավարման ընդհանուր բնութագրին, ինչպես նաև վարչական իրավունքի և հանրային կառավարման փոխհարաբերակցությանը:

Թեմա 2. Վարչական իրավունքը հանրային իրավունքի համակարգում

Այս թեման ներկայացնում է հանրային իրավունքի համակարգը և վարչական իրավունքի տեղը այդ համակարգում, ինչպես նաև փոխհարաբերակցությունը հանրային իրավունքի այլ ճյուղերի հետ:

Թեմա 3. Վարչական իրավունքի աղբյուրները

Այս թեման լուսաբանում է իրավունքի այն աղբյուրները, որոնք բովանդակում են վարչաիրավական հարաբերությունները կարգավորող վարքագծի կանոնները։

Թեմա 4. Պետական կառավարումը և տեղական ինքնակառավարումը

Այս թեման քննարկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման տարբերությունները և դրանց փոխհարաբերակցությունը։

Թեմա 5. Վարչարարության հասկացությունը և տեսակները

Այս թեման ներկայացնում է վարչարարության հասկացությունը, դրա հատկանիշները և այն ակտերը, որոնք եզրափակում են վարչարարությունը։

Թեմա 6. Վարչարարության հիմնարար սկզբունքները

Այս թեման ներկայացնում է վարչարարության ինչպես համապարփակ, այնպես էլմասնակի սկզբունքները և դրանց փոխհարաբերակցությունը սահմանադրական սկզբունքների հետ։

Թեմա 7. Վարչական ակտ

Այս թեման լուսաբանում է վարչական ակտի հասկացությունը, դրա կարգավորիչ դերը, հատկանիշները, տեսակները և ձևերը։

Թեմա 8. Վարչական ակտի վերացումը

Այս թեմայի շրջանակում վեր են հանվում վարչական ակտի վերացման երեք ձևերը՝ ոչ իրավաչափ վարչական ակտի առ ոչինչ լինելը, ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր լինելը և իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելը։

Թեմա 9. Ռեալ ակտ

Այս թեման վերաբերում է ռեալ ակտի հասկացությանը՝ որպես վարչարարությունը եզրափակող անձի համար փաստական հետևանքներ առաջացնող գործողություններ կամ անգործություն։

Թեմա 10. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ

Այս թեման լուսաբանում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի էությունը, դրա վերացական-նորմատիվ բնույթը և դրա ու անհատական իրավական ակտի տարբերությունը։

Թեմա 11. Վարչական վարույթը և դրա փուլերը

Այս թեմայի շրջանակում ուսումնասիրության առարկա է դառնում վարչական վարույթը, որի արդյունքում ընդունվում է վարչական ակտ, դրա գործառույթը և հիմնական երեք՝ հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերը։

Թեմա 12. Վարչական վարույթի սկզբունքները

Այս թեման ներկայացնում է վարչական վարույթի սկզբունքները, դրանց և վարչարարության սկզբունքների տարբերությունը, վարութային բնույթը։

Թեմա 13. Վարչական վարույթի դերակատարները

Այս թեմայի շրջանակում քննարկվում է վարչական վարույթի սուբյեկտային կազմը և վարույթի կողմերի ու այլ անձանց իրավական կարգավիճակը։

Թեմա 14. Վարչական ակտի հարկադիր կատարման վարույթը

Այս թեման լուսաբանում է վարչական ակտի հարկադիր կատարման հիմքերը, նախապայմանները, եղանակները և հետևանքները։

Թեմա 15. Վարչարարության նկատմամբ վերահսկողությունը

Այս թեման նվիրված է վարչարարության արդյունքների բողոքարկման կարգին, բողոքարկման վարույթին և վարչարարության նկատմամբ վերահսկողության ձևերին։

Թեմա 16. Վարչարարությամբ հասցված վնասի հատուցումը

Այս թեման ներկայացնում է վարչարարությամբ հասցված վնասի հատուցման վարույթը, վնասի հատուցման նախապայմաններն ու հիմքերը, ձևերն ու եղանակները, ոչ իրավաչափ վարչարարությամբ հասցված վնասի հատուցման առանձնահատկությունները և ոչ նյութական վնասի հատուցման դեպքերը։

4. Գրականության ցանկ

Հիմնական գրականություն՝

1. Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, Հ. Թովմասյան, Օ. Լուխթերհանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել- Եր.: Բավիղ, 2011, 424 էջ:
2. Административное право: учебный курс / под ред. Р.А.Подопригоры. – Алматы: Налоговый эксперт, 2010. – 368 с.
3. Административное право и процесс: полный курс / Ю.А.Тихомиров. – М.: Изд-во г-на Ти- хомирова Ю.А., 2001. С. 572.
4. Общее административное право: учебник / под ред. Старилова Ю.Н. – Воронеж: Изд-во Во- ронеж. гос.ун-та, 2007.
5. Административное право зарубежных стран: учебник / под ред. А.Н.Козырина и М.А.Штатиной. – М.: Спарк, 2003.
6. Бахрах Д.Н., Россинский Б.В., Старилов Ю.Н. Административное право: учебник для вузов. – 2-е изд., изм. и доп. – М.: Норма, 2005.
7. Administrative Law: Cases and Materials. Ronald A. Cass, Colin S. Diver, Jack M. Beermann. Aspen Law & Business, 1998 - 1295
8. Administrative Law. Alfred C. Aman (Jr.), William T. Mayton. West Academic Publishing, 2014 – 861.
9. Administrative Law. John M. Rogers, Michael P. Healy, Ronald J. Krotoszynski, Kent Barnett. Wolters Kluwer, 31 հնվ, 2021 թ. – 906.

10. Administrative Law. Timothy Endicott. Oxford University Press, 2021 - 728

Էլեկտրոնային ռեսուրս՝

1. https://www.arlis.am/
2. http://www.concourt.am/
3. https://www.court.am/
4. https://www.datalex.am/

5. Հարցեր եւ առաջադրանքներ ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար

Հարցաշար՝

1. Գործադիր իշխանությունը և հանրային կառավարումը
2. Հանրային և մասնավոր իրավունքի տարանջատման չափանիշները
3. Վարչական իրավունքը և հանրային իրավունքի մյուս ճյուղերը
4. Վարչական իրավունքի աղբյուրները
5. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման տարբերությունը
6. Վարչարարության հատկանիշները
7. Վարչարարության տեսակները
8. Վարչարարության համապարփակ սկզբունքները
9. Վարչարարության մասնակի սկզբունքները
10. Վարչական մարմնի հատկանիշները
11. Վարչական ակտի հասկացությունը
12. Վարչական ակտի տեսակները և ձևերը
13. Վարչական ակտի անվավերությունը
14. Վարչական ակտի առ ոչինչ լինելը
15. Իրավաչափ վարչական ակտի վերացումը
16. Վարչական ակտի վերացման հետևանքները
17. Ռեալ ակտի հասկացությունը
18. Ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի հասկացությունը
19. Վարչական վարույթը և դրա փուլերը
20. Վարչական վարույթի սկզբունքները
21. Գործի փաստական հանգամանքների պարզումը և ապացուցման բեռը
22. Վարչական վարույթի դերակատարները
23. Վարչական ակտի ուժի մեջ մտնելը և անբողոքարկելի դառնալը

24. Վարչական ակտի հարկադիր կատարման հիմքերը
25. Վարչական ակտի հարկադիր կատարման ձևերը
26. Հանրային դրամական պահանջով վարչական ակտերի հարկադիր կատարման առանձնահատկությունները
27. Վարչարարության նկատմամբ վերահսկողության հասկացությունը
28. Վարչարարության նկատմամբ վերահսկողության ձևերը
29. Վարչական բողոքարկման վարույթը
30. Վարչարարության հասցված վնասի հատուցման վարույթը
31. Ոչ իրավաչափ վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հիմքերը և եղանակները
32. Իրավաչափ վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հիմքերը
33. Վարչարարության հասցված վնասի դեպքում հետադարձ պահանջի իրավունքը
34. Վարչարարությամբ հասցված ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը

6. Ստուգումների անցկացման ձևը եւ գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր եւ տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պատասխանի տրամաբանական կառուցում, տեսական եւ կիրառական գիտելիքների համադրում, օրինակներ բերելու ունակություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Ստուգարք. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները եւ ելույթների վերլուծության ունակությունը ստացված գիտելիքների արդյունքում: